

ԿԱՐՆՈ ՆԱՀԱՆԳԻ ԳՈՐԳԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԻՆՔԱՏԻՊ ՆՄՈՒՇՆԵՐ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԳԱՅԱՅԱՆ

Դարիս շարունակ հայ ժողովուրդը, քաղաքական անապահով պայմաններին հետևանքով, հայաժանրների ու սիստեմատիկ կողոպուտի է ենթարկվել օտար նվաճողների կողմից: Հարստահարություններն ու բռնազավումներն առավել կազմակերպված և աննախնայ ընդդեմ ստացան 1915 թ. Մեծ եղևոնի օրերին, երբ երիտթուրքերի՝ հայ ժողովրդին աղվովին բնաջնջելու ծրագրի իրագործմանը ղուգրնթաց, հափշտակվեց նրա աղջային ու եկեղեցական, հասարակական կազմակերպությունների ու մասնավոր անձանց ունեցվածքը՝ որպես «լքյալ գույք»: այդ գույքի մի մասն էլ բռնադրավիկ ու պետականացվեց: Հափշտակված գույքի մեջ զգալի բանակ էին կազմում Թուրքիայի տարբեր վիլայեթներում պատրաստված հայկական զորքերը, որոնք, վաթսունհինգ տարիների լուծությունից հետո, այսօր որոշ վայ արվեստագետներ լույս աշխարհ են հանում որպես «թուրքական ստեղծագործություններ»: Այդ զորքերից են մեր ուսումնասիրության առարկա՝ Կարին (էրզրում) քաղաքում պատրաստված հայկական երկու զորքերը:

Կարնո նահանգը զորագործության նշանավոր կենտրոն էր, Արենիքից Արևմուտք ձգվող քարավանային առևտրական հանապարհների կարևոր հանգույցակետը: Շրջակա գյուղերից ու քաղաքներից բաղմաթիվ զորքեր են բերվել Կարին, որոնք Բաթումի և Տրապիզոնի նավահանգիստներով միջազգային շուկա են ուղարկվել:

XIII դ. արաբ աշխարհագիր Յակուտ ալ Համավին իր «Աշխարհագրական բաղրքում» պատմական Հայաստանի Կարին քաղաքի տեղագրության մասին խոսելուց հետո մեջ է բերում IX դ. արաբ ճանապարհորդ Աբու Ավնիի «Եսևյալ հետաքրքրական վկայությունը. «Կալիկալայում (Կարին քաղաքում—շ. բ.) մի տեսակ զորք են պատրաստում, որը քաղաքի անվան կրճատումով կոչվում է «Կալի» [խալի]»¹: Այս բացատրությունը տեղ է գտել նաև «Իսլամական հանրագիտարանում»²:

Արաբ մատենագիր Շեմս-էզզին ալ Մուկադդասին (985 թ.) մեջ է բերում ալ Իսթահրիի (930 թ.) վկայությունը, թե Հայաստանը մեծ երկիր է և Կալիկալան նրա քաղաքներից է. «Ալլետեղից արտահանում են ծածկոցներ, բրդե կարպետներ, որոնք նշանավոր են իրենց առանձին հատկություններով»³:

Մի այլ արաբ ճանապարհորդ՝ Իբն-ի Բատուտան, 1333 թ. այցելելով Իրդուսի վիլայեթի մեջ մտնող Երզնկա քաղաքը, գրում է. «Արզանջան...

¹ «Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին», կազմեց Շ. Բ. Սալբանդյան, Երևան, 1965, էջ 97:

² «Encyclopedie de l'Islam», supplement, Leyde, 1918, p. 116.

³ «Сборник материалов для описания местностей и племен Кавказа», Тифлис, 1901, вып. XXXVIII, с. 14, 92.

նրա բնակիչների մեծագույն մասը հայ է, այստեղ շինում են գեղեցիկ կերպասներ, որ իր [բաղաբի] անունով են կոչվում»⁴:

XVII դարակեսի թուրք ճանապարհորդ էվլիա Չելեբին նշում է, որ էրզրումում ապրում են 30 000 քրիստոնյաներ, և հայերը 13 եկեղեցի ունեն, էրզրումում գործում են փոքր խավավոր գորգեր՝ «չիրեք» (chirek) և «միրեք» (mirek) անուններով, որոնք անվանի են աշխարհում»⁵: Նույն հեղինակը էրզրումի վիլայեթի մի այլ հայկական բաղաբի՝ Բաբերդի մասին գրում է. «...արտադրություններից նշանավոր են նաև Բայրուրգի գորգերը և բրգեղենները. թեթև, լավ ներկված. ճոխ գորգեր, որոնք արտահանում են այլ երկրներ»⁶:

Եվրոպացի ճանապարհորդները ևս իրենց ուղեգրություններում բազմաթիվ վկայություններ ունեն էրզրումի վիլայեթում հայերի կողմից գորգերի օգտագործման մասին: Այսպես, 1404 թ. իսպանացի Կլավիխոն նշում է, որ Երզնկայում հայերն իրենց պատվելու համար տներին բերել են գորգեր և իրենք գիշերել են դրանց վրա⁷: Ֆրանսիացի Պիեյր Ամեդի Ջոբբը 1806 թ. գիշերել է էրզրումի վիլայեթի հայկական Արծափ ավանում, ուր օգտագործել են գորգեր⁸: 1835 թ. Ու. Կ. Ստուարտը նշում է, որ էրզրումի հայկական եկեղեցում հարուստ տղամարդիկ «ծնրագրում էին եկեղեցու աջ կողմում» գորգերի վրա⁹: 1873 թ. անգլիացի կապիտան Ռիչարդ Ուիլբրահմը Կարսի հայկական գյուղական տունը նկարագրելիս հիշում է գորգերի օգտագործումը¹⁰:

էրզրումի հայ ազգաբնակչությունը հետազայում գործնական օժանդակություն է ցուցաբերել Օսմանյան կայսրության մեջ գորգագործության զարգացմանը: Այսպես, 1843 թ., երբ հայերի անմիջական նախաձեռնությամբ ու ղեկավարությամբ բացվում է Հերեքեյի սուլթանական արքունի գորգագործարանը¹¹, բազմաթիվ վարպետ-արհեստավորներ են հրավիրվում հայկական գորգագործական հին կենտրոններից՝ Վանից, Բիթլիսից, Սվազից, Կեսաբիայից, ինչպես նաև՝ էրզրումից, Բաբերդից, Երզնկայից ու այլ բաղաբներից: Հիշյալ բաղաբների վարպետ-արհեստավորների պատրաստած գորգերը երեք հարյուր տարի անընդմեջ վարդարել են սուլթանների արքունի ճարտարապետներ՝ Պալյան գերդաստանի¹² Բոսֆորի ափերին կառուցած պա-

⁴ «Ստար ադյուրները հայերի մասին», № 2, Արարական ադյուրներ, բաղեց և թարգմանեց Հ. Անանյան, Երևան, 1940, էջ 31:

⁵ Evlia Efendi, Narratives of travels in Europe, Asia and Africa, London, v. 2, 1834, p. 113, v. 7, 1850, p. 213.

⁶ Նույն տեղում, հ. 2, էջ 188:

⁷ Հ. Քյուրդյան, Գորգը հայոց մոտ, Վենետիկ, 1947, էջ 48:

⁸ Ուղեգրություններ, թարգմ. Հով. Հակոբյան, հ. 2, Երևան, 1934, էջ 152:

⁹ W. K. Stuart, Journal, London, 1854, p. 99.

¹⁰ Captain Richard Wilbraham, Travels in the Trans-Caucasian provinces of Russia, London, 1839, p. 292.

¹¹ H. Jacoby, How to know oriental carpets and rugs, London, 1967, p. 66; K. H. Turkhan, Islamic rugs, London, 1968, p. 81, 88; A. E. Manvelian, Les tapis d'orient, Paris, 1959, p. 255; M. Elland, Oriental rugs, Boston, 1976, p. 127; Ch. W. Jacobson, Oriental rugs, a complete guide, Tokyo, 1978, p. 205.

¹² Վ. Զաքարյան, Հիշատակաբան (1812—1833), Կահիրե, 1833, հ. 9, № 31—34, Y. Çark, Türk devleti hizmetinde ermeniler (1453—1953), İstanbul, 1953, p. 70—75; Sadi Koças, Tarih boyunca ermeniler ve türk-ermeni ilişkileri, Ankara, 1967, p. 113.

լատները, մեղրեսներն ու մզկիթները, իսկ մի մասն էլ որպես նվեր ուղարկվել է նվրուպական արքունիքները:

XIX դարավերջին էրզրումի վիլայեթից տարեկան 225 000 ֆրանսիական ֆրանկ արժողությամբ գորգեր են արտահանվել¹³, ժամանակագիրները նշում են, որ «Բարերդում և շրջաններում գործում են մետաքսառէջ և ոսկեթել գիւղացիկ գորգեր, որոնք շատ հարգի են»¹⁴, իսկ նրկնկայում ստեղի զխավոր արհեստներից է տարագագործությունը: 2000-ից ավելի ընտանիքներ ապրում են մանիսա գործելով... արհեստներն ընդհանրապես հայոց ձևերին են»¹⁵ Կարսում, այլ քաղաքներում ու շրջաններում առևտուրն ու արհեստները մեծ մասամբ հայոց ձևերին են»¹⁶, «Բուրդը կպորձածվի հասարակ գորգերու և բանվածքներու... մի մասն էլ կարտածվի»¹⁷:

XIX դ. կեսերից գորգերը, որպես ապրանք, միջազգային առևտրական հրապարակներում կարևոր տեղ են զբաղում: Արևելյան գորգերի ուսումնասիրությունը լայն հետաքրքրության առարկա է դառնում: Բայց որովհետև գորգերը Եվրոպա էին բերվում Պարսկաստանի և Թուրքիայի վրայով, ուստի դրանք անվանվում էին պարսկական կամ թուրքական: Սակայն գտնվեցին մասնագետներ, որոնք այդ գորգերի մեջ նկատեցին որոշակի մի խումբ՝ հայկական հատկանիշներով: Վիշապառճ գորգերի մասին խոսելիս գորգարվեստի բնագաւտ Ֆ. Ի. Մարտինը գրում է. «Ինձ հաջողվեց հաստատել, որ այդ բոլոր գորգերն էլ գալիս են Հայաստանի ամենաանմատչելի զավառներից, որտեղ դրանք գտնվում էին մզկիթներում և եկեղեցիներում կամ հին բնտանիքների մոտ»¹⁸: Պատահական չէ, որ հետազայում ևս հին գորգեզ՝ ձեռք բերելու համար հարկադրված դիմում են ոչ թե իսլամական, այլ հայկական հնագույն գորգագործական կենտրոններին: Ստամբուլի «Էվզաֆ» թանգարանի (հետազայում՝ Թուրք և իսլամ ստեղծագործությունների թանգարան) վարչության անդամ Ալմենակ բեյ Սագոյանը վկայում է, որ վարչությունը «... հին գորգեր ստանալու համար երկու հայկական կենտրոնների միայն դիմեց՝ էրզրում և Վան»¹⁹: Նա միաժամանակ նշում է, որ էրզրումի Զիֆլիթ մզկիթից ստացված գորգերից երկուսը՝ հայկական էին, որոնք ցուցադրվում էին թանգարանի «դասական» կոչվող սրահում՝ 58 և 59 գույքահամարների տակ: Մենք բավական երկար հետաքրքրվել ենք այդ գորգերով. 1968 թ. Կարս—էրզրում—Անկարա ճանապարհով եղել ենք Ստամբուլում, այցելել Թանգարաններ և հարցուփորձ արել դրանց մասին, բայց ապարդյուն...:

Գորգարվեստի զերմանացի բնագաւտ Ք. էրզմանը, որը երկար տարիներ զաստիանդել է Ստամբուլի համալսարանում, էրզրումի մզկիթներից մեկում տեսել է XVI դ. վերաբերող չորս մեծ վիշապագորգ: Բայց թուրք աշխատակիցները դրանք անմիջապես թաքցրել են...: Նա հիշատակում է Ստամ-

¹³ Վ. Մ. Էփրեկյան, Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, Է. Բ. Վենետիկ, 1906, էջ 305:

¹⁴ Նույն տեղում, Է. Ա. Վենետիկ, 1903, էջ 353:

¹⁵ Նույն տեղում, էջ 663:

¹⁶ Նույն տեղում, Է. Բ. էջ 340:

¹⁷ Նույն տեղում, էջ 351:

¹⁸ F. P. Martin, A history of oriental carpets before 1800. Vienna, 1908, p. 116.

¹⁹ A r m e n a g S a k i s t a n, Pages d'art Arménien, 1940, p. 25, note 1.

բուլի թուրք և իսլամ ստեղծագործությունների թանգարանում պահպանված գորգերի մասին, որոնք Ռուստեմ Գալստյանի (ին պահպանում) նրա ասելով՝ թանգարանը «աշխարհի ամենահին տապալակ, բայց ամենահարուստ գորգերի հավաքածուն ունի...» և առաջին եվրոպացին էի, որ տեսա թաքնված այդ գանձերը»²⁰։ Ք. էրզմանը դարձանքով նշում է, թե թանգարանում «դամասկյան» կամ նույնիսկ «սուրմանյան աշխարհի» գորգերը թվով քիչ են, մինչդեռ «կովկասյան գորգերը (հայկական շանվանելու համար գրում է կովկասյան) ավելի շատ են և դրանց մեջ կան մի քանի գեղեցիկ դրակոն գորգեր, որոնք հետագայում առաջնորդեցին դեպի «քութաններն» ու «շիրվաններն»։ Աշխարհի ոչ մի այլ վայրում չեք տեսնի այնքան շատ ու համեմատաբար լավորակ գորգեր, գրում է նա։ Դրանք հիմնականում մեծ կտորներ կամ գորգահատվածներ են՝ գործված XVIII դ.²¹։ Ք. էրզմանը գտնում է, որ «արևելյան գորգերում ամենահարուստիչ ու հետաքրքրական խումբը կազմող կովկասյան գորգերի ուսումնասիրությունը պետք է սկսել այս թանգարանի օրինակներից։ Դրանք, հավանաբար, այնքան բազմաթիվ են, որքան Ամերիկայի և եվրոպայի բոլոր հավաքածուները միասին վերցրած»²²։ Հեղինակը գոհունակությամբ նշում է, որ իր թուրք ասպիրանտուրան՝ Շերարե Ետկինը գրում է կովկասյան գորգերի մասին։

1978 թ. Շ. Ետկինը խնդրում անգլերեն և գերմաներեն լեզուներով հրատարակեց «Վաղ կովկասյան գորգերը Թուրքիայում» վերնագրով երկհատորյակը, որտեղ առաջին անգամ ներկայացվել են 103 «կովկասյան» անվանված գորգեր։ Դրանց մեջ են նաև Ա. Սադրյանի նշած և ժամանակին ճշգրտված բերված հայկական գորգերը²³։ XVIII դ. վերագրվող հիշյալ գորգերի մանրամասն ու համեմատական ուսումնասիրությունը կարևոր նպաստ է մոռացության մատնված հայկական գորգագործական կենտրոնների բացահայտման և հայկական գորգերի ազգային առանձնահատկությունների պարզաբանման ուղղությամբ։

Շ. Ետկինը միտումնավոր ջանում է գորգագործության սկզբնավորումը և տարածումը վերագրել բացառապես թուրքերին՝ անտեսելով հայ ժողովրդի պատմական դերն ու ձեռնարկությունը այդ բնագավառում։ Աշխատության մեջ քննված են հիմնականում կենդանաճ վիշապազուգեբեր, որոնք մասնագիտական գրականության մեջ վերագրվում են հայերին։ Ներկայացված գորգերից շատերը գործվել ու հայտնաբերվել են ոչ թե Կովկասում, այլ Անատոլիայի երբեմնի հայաշատ կենտրոններում՝ Վանում, Սեբաստիայում, Խարբերդում, Եփրատիայում, Կեսարիայում, այլ քաղաքներում ու շրջաններում, իսկ մեծ մասը՝ Կարինում։

Վերահիշյալ գորգերին տալով «կովկասյան» ընդհանուր պիտակ, Շ. Ետկինը ճշգրտում է հերքել դրանց հայկական լինելը։ «Վաղ կովկասյան գորգերը, — գրում է նա, — իրենց հարուստ գույներով և բնորոշ դրակոն դարդամոտիվներով, հաճախ սխալմամբ անվանված են «հայկական»։ Բայց և այնպես, բոլոր տարբեր տիպերն ունեն ընդհանուր մի նմուշ և այսօր դրանք կա-

²⁰ K. Erdman, Sevenhundred years of oriental carpets, London, 1970, p. 107.

²¹ Նույն տեղում, էջ 109.

²² Նույն տեղում.

²³ Şerare Yetkin, Early Caucasian carpets in Turkey, v. 1, 2, London, 1978.

²⁴ Նույն տեղում, տախտ. 32 և 85.

րող են սերտորեն պատկանել զուտ կովկասյան ավանդույթներին²⁵։ Լևելին՝ նույնիսկ գրքի՝ գորգագործական շրջանների ներկայացնող քարտեզի վրա լիանձր, սև թանաքով ջնջված է «Հայաստան» բառը²⁶։ Լիլ առիթով հեղինակն ընդգծում է. «Երկար ժամանակ ենթադրվում էր, որ (վիշապագորգերը—Հ. Գ.) պատրաստված են հայերի կողմից» այն պատճառաբանությամբ, թե «սրակոն գորգերի հայկական ծագման խնդիրը մեծ մասամբ հիմնավորվում էր հայերեն արձանագրություն կրող գորգերի գոյությամբ»²⁷։ Շ. Ետկինը ընդունելով հանդերձ, որ հին ժամանակներից սկսած հայ արհեստավորներն աշխատել են Մերձավոր Արևելքի տարածքում, գրում է՝ «...այսօր (հայերեն—Հ. Գ.) արձանագրությունը չի կարող դիտվել որպես վկայություն տվյալ խմբի հայկական ծագման», ապա՝ եզրակացնում. «հետևաբար, անհավանական է, որ դրական գորգերն իրենց ծագումով պարտական լինեն հայ գորգագործներին։ Շատ ավելի հավանական է, որ դրանք, ամենից առաջ, պատրաստված են թուրքական ժողովուրդների կողմից, որոնք XI դ. հաստատվեցին Կովկասում՝ իրենց հետ բերելով սիմետրիկ հանգույցի տեխնիկան, որը նույնպես տիրապետող դարձավ անատոլիական գորգագործության մեջ»²⁸։

Հեղինակը Անատոլիայի և Արևմտյան Հայաստանի հայկական գորգերը սեփականացնելուց հետո փորձում է թուրքական դարձնել նաև Արևելյան Հայաստանի գորգերը։ Դրա համար նա աշխատում է արժեքագրել Ղարաբաղի հայկական գորգերի ազգային առանձնահատկությունները դրանց և առհասարակ «կովկասյաններին» վերագրելով մասամբ «իրանական ազդեցություններ»²⁹։ Սակայն նա գտնում է, որ «կովկասյան» գորգերն իրենց ներշնչմամբ և տեխնիկայով տարբերվում են իրանականներից և առավել նման են անատոլիականներին³⁰։ Եվ ապա այն միտումնավոր և անհիմն միտքն է զարգացնում, որ իբր «կովկասյան» գորգերը «անատոլիական» (թուրքական) ծագում ունեն և կրում են թուրքական ազդեցություն³¹։ Ստացվում է, որ «կովկասյանները» թուրքական գորգերի ընդօրինակություններն են՝ պատրաստված թուրքերի կողմից. հետևաբար դրանք թուրքական արվեստի ստեղծագործություններն են։

Անտեսելով հայերի դերը «կովկասյան» և «անատոլիական» գորգերի պատրաստման գործում, դրանց դարձմոտիվների միջև դրսևորվող նմանություններն ու ընդհանրությունները Շ. Ետկինը պատճառաբանում է հետևյալ կերպ. «...թուրքուման մի ցեղ Կենտրոնական Ասիայից գաղթել է Կովկաս։ Մի մասը հաստատվել է այնտեղ, մինչ երկրորդ խումբն անցել է Անատոլիա և բնակություն հաստատել Կոնիայի շրջանում»³²։

Գորգարվեստի մասին Շ. Ետկինի կողմնակալ տեսակետներն առավել րացահայտ արտահայտվել են նրա մեկ այլ աշխատության մեջ³³։ «Գորգա-

25 Նույն տեղում, հ. 1, էջ VII։

26 Նույն տեղում, էջ VIII։

27 Նույն տեղում, էջ I։

28 Նույն տեղում, էջ 38։

29 Նույն տեղում, էջ 90—97։

30 Նույն տեղում, էջ 102։

31 Նույն տեղում, էջ 40, 49, 62, 77, 81—82, 97, 102։

32 Նույն տեղում, էջ 40։

33 Şerare Yetkin, Türk halı sanatı, İstanbul, 1974.



Նկ. 1. «Գնչաբ» գորգը

գործություն պատմությունը,— գրում է նա,— թուրքերի հետ կապ ունի...հանգուցավոր գորգերը սելջուկ-թուրքերի կողմից Կենտրոնական Ասիայից դեպի Արևմուտք են բերվել»³⁴, «...դրանց իսլամ ժողովուրդներին թուրքերն են ծանոթացրել»³⁵ և «...այդ արհեստը ողջ աշխարհին ծանոթացնողը թուրքերն են ևդևր»³⁶:

Շ. Խտկինը իր նպատակին հասնելու համար աղավաղում է պատմական փաստերը: Նա «մոռացություն» է տալիս միջնադարյան արար հեղինակների բազմաթիվ վկայությունները՝ «արմանի-հայկական» գորգերի մասին, որոնք տուրքի, հարկի, նվիրատվության միջոցով, ինչպես նաև որպես կողոպուտի և առևտրի ապրանք լայնորեն տարածված էին Կենտրոնական Ասիայից մինչև Բալկաններ, Վոլգայի ափերից մինչև Նդիպտոս և այլուր:

1979 թ. Ֆրանսահայ արվեստարան Ա. Աշենյանի՝ Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի միջոցով Հայաստանի պատմության պե-տական թանգարանին նվիրած գորգերից ևրկուսը՝ իրենց ընդհանուր հորինվածքով, ոճավորումով, դարդամոտիվներով և գունային համակարգով ներկայացնում են Ա. Սազդյանի հիշատակած գորգերի տարբերակները:

Այժմ քննենք Կարնո նահանգում գործված հայկական երկու գորգերը, որոնք գտնվում են Ստամբուլում՝ բազմաթիվ այլ գորգերի հետ: Ունական վերլուծության և դրանց հայկական ստեղծագործություններ լինելու հարցում մեղ կօգնի հայատառ հիշատակարանով, մասնագիտական գրականու-թյունից ծանոթ «Գոհար» կոլեկցիոն գորգը, որը հայկական հնագույն կենդա-նապատկեր վիշապագորգերից դեպի ծաղկատերևային նմանած գորգերի փոխանցման միջանկյալ օղակն է:

«Գոհար» գորգը (նկ. 1) ևս պատրաստվել է էրզրումի նահանգում (1679 կամ 1699 թթ.): Այն գործել է Գոհար անունով մի հայ աղջնակ՝ օրինակ ունե-նալով հին վիշապագորգերը, և նվիրել հայ եկեղեցուն³⁷: Մեծ եղեռնի օրե-րին թուրք զավթիչները այս գորգը հափշտակել ու տարել են մզկիթ, ապա Բաթումի նավահանգստով արտահանել են Օմրուպա ու վաճառել Անգլիայի Վիկտորիա և Ալբերտ թանգարանին՝ Վերջերս թանգարանը աճուրդի է հա-նել այն և այժմ գտնվում է Իսթալիում³⁸:

Կարնո ծաղկատերևային առաջին վիշապագորգը (նկ. 2)³⁹ իր հորինված-քով կենդանապատկեր վիշապագորգերից դեպի ծաղկատերևային նմանած տեսակի փոխանցման տիպիկ օրինակ է: Այն վերագրվում է XVII դ.: Հայտ-նաբերվել է էրզրումի Զիֆիթե մզկիթից և 18. 12. 1911 թ. փոխադրվել Ստամբուլի թուրք և իսլամ ստեղծագործությունների թանգարան, ուր այժմ ցուցադրվում է 729 գույքահամարի տակ (նախկինում՝ «Էվգաֆ», գույքահա-մար 59), նրա չափերն են 2,33×5,60 մ:

³⁴ Նույն տեղում, էջ 9:

³⁵ Նույն տեղում, էջ 132:

³⁶ Նույն տեղում, էջ 11:

³⁷ Jean Lefevre, Caucasian carpets from the 18th to the 19th century, Lon- don, 1977, p. 31.

³⁸ A. F. Kendrick, C. E. Tattersall, Handwoven carpets-Oriental and European, London, 1922, v. 2, p. 16.

³⁹ Հ. Գալալյան, Հայկական «Գոհար» գորգը (սփյուռքյան և տեղական), 1979, № 4, էջ 21—27):

⁴⁰ Şerare Yetkin Early Caucasian carpets in Turkey, v. 1, pl. 32.



Նկ. 2. Նարնա Ժաղկատերևային տոռաջին վիշապագորգը (XVIII դ.)

Գորգի ներքև ու միջնաթևերը դույզ ոլորուն, փղոսկրաշագանակադույն բրդաթևերից են։ Բուրդը մշակված է տեսանագործական պայմաններում։ Ֆուրաքանչուր հանդուցաշարից հետո անցկացված են երկու միջնաթևեր՝ ամրապնդելու համար խավահանգույցները։ Մեկ ղմ²-ում 30 շորիզոնական և 28 ուղղահայաց (ընդամենը 540) համաչափ պերդեզյան գորգահանգույցներ ունի, հավը բաղմնրանց հաստ բրդաթևից է, սեղմորեն երկտակ ու կարճ։ Հիմնականում օգտագործված են կարմիր, կապույտ, վարդագույն, կանաչ, դեղին, շագանակագույն և փղոսկրագույն բրդաթևեր՝ իրենց նրբերանգներով։ Էորդը լավ է պահպանված։ Թեև հզրերում փորը վնասվածքներ կան, բայց գույները պահում են իրենց պայծառությունը։

Կենտրոնական գորգադաշտը 1,60 մ լայնքով է։ Փոնք կապույտ է։ Հիմնական զարդամոտիվները՝ երեք մեղալիոնները, պատկերված են երեք առանցքի շուրջ։ Գորգի ընդհանուր շորինվածքում կենտրոնական տեղ է գրավում Մեքսախ-դարաբաղյան «չրաբերդ» կոշվող ճառագայթաձակ մեղալիոնը, որը հայտնի է նաև «սրավոր քաղաք» անունով։ Եորգի վերևում ու ներքևում իրար հարևան են երկու ութանկյուն մեղալիոն կա, որոնցից ափնի վերև հուլնած, շեղադիր կես մեղալիոններ են տեղադրված։ Կենտրոնում մի մեծ, սպիտակ. ճառագայթաձակ մեղալիոն է, որի աստղի շուրջը կարմիր, կապույտ, դեղին ու սրճագույն ոճավորված ճյուղեր ու կապույտ փոքրիկ կենդանիներ են գործված՝ ներդաշնակ համաչափությամբ։ Սրա կենտրոնում տեղակայված է շեղադիր քառակուսի, որի չորս գագաթներին պատկերված են խաչեր, իսկ երկու կողքերին՝ հակադարձ դիրքով վիշապներ։ Ներսի շեղադիր մեղալիոնը ներփակում է ութանկյուն խաչանիշը, որի վրա զրոշմված է ութանկյուն կուրիզով սպիտակ աստղ։

Վերևի ու ներքևի ութանկյուն մեղալիոններն իրենց սղոցածն, տերևագարդ լայն երիզագոտիներով, գույներով ու զարդաձևերով նման են «Գոհար» գորգի համանման զարդամոտիվներին։ Խիստ հատկանշական է, որ «Գոհար» գորգի ոճավորված, կիսաշրջանաձև վիշապազարդե այստեղ թեև խիստ ոճավորվել ու երկրաչափականի է ձևափոխվել, բայց, թերևս, պահում է իր հնաձևությունը, որքան էլ որ երկու կեսերը դեմ-հանդիման գալով կազմել են ութանկյուն մեղալիոն։ Վերջինիս կենտրոնական դաշտը ամբողջությամբ ծածկում է ոճավորված, թևատարած արծվի խորհրդանիշը, իսկ նրա վրայի ութանկյունը ներփակում է բուսական զարդաձևերից առաջացած խաչադարձը, որի կենտրոնում ես զրոշմված է մի այլ փոքր խաչանիշ։ Ութանկյանի շորիզոնական գույզ-գույզ վիշապաձև տերևները և ուղղահայաց դույզ-գույզ նմանաձև կենաց ծառերը, իրենց ամբողջությամբ մեջ վերցրած, կազմում են մի մեծ խաչազարդ։ Մեղալիոնների կողքերին, բաց մնացած տարածության մեջ, վերից վար դասավորված են խաչանիշ կենտրոններով արմավենյակներ ու վարդյակներ և երկրաչափական պատկերներ։

Լայն գորգագոտին ունի 17 սմ լայնություն և փղոսկրագույն ֆոն։ Կապույտ և գեղին վարդյակներն ու սրճագույն և կարմիր արմավենյակները դույնղգույն տերևներով, փոխադարձ շրջված դիրքով, կանոնավոր հաջորդականությամբ շղթա կազմած եզերում են ամբողջ գորգը։ Տվյալ զարդաձևն իր հիմքով և օգտագործման իմաստով հայկական հնագույն ոճավորված Տ զարդամոտիվն է։

Նեղ եզրագոտիները համանման են և ներսից ու դրսից 4 սմ լայնքով կապեր 6—8



Նկ. 3. Կարնո ծաղկառենալին երկրորդ վիշապադորդը (XVIII դարավերջ)։

շրջափակում են լայն զորդագոտին: Դրանց ֆոնը դեղին է, որոնց վրա ես հրոշմված է S վիշապազարդի շարանը: Եզրամասյավներ 2 սմ լայնքով է, շագանակագույն ֆոնի վրա դեղին ու սպիտակ ատամնաշարերով:

Էրզրումի վերոհիշյալ գորգն ունի իր մի շարք տարրերակներն ու նման-օրինակները: Դրանցից են՝ էրզրումի Լայա Մուստաֆա փաշայի մզկիթից 1915 թ. հայտնաբերված՝ 113/3072 գույքահամարի գորգը, Շիվրիկի Ուլու մզկիթի նույնանոճ երկու գորգերը, Սվազի Յենիջամից 1912 թ. բերված 55/1907 գույքահամարի գորգը, Բիթլիսի Մեծ մզկիթից 1922 թ. բերված 110/3950 գույքահամարի գորգը, Թոխատի Ալի մզկիթից 1936 թ. բերված N 1—697/940 և N 944/1—718 (XVIII դ.), Ամասիայից 1936 թ. բերված N 679/1—13, Բուրսայի Դայն Հաթունի մզկիթից 1911 թ. բերված 57/737 գույքահամարի և այլ բազմաթիվ գորգեր⁴¹:

Պարեն ծաղկատերևային երկրորդ վիշապագորգի (նկ. 3)⁴² ծաղկայ-նությունը համեմատաբար ավելի է շեշտված, քան նախորդ գորգինը: Սա փոքր վարդյակների համախմբումով՝ մեծ մեղալիոնի նախաքայլն է: Վե-րագրվում է XVIII դարավերջին: Հայտնաբերվել է Էրզրումի Չիֆլիք մզկի-թից և 18. 12. 1911 թ. տեղափոխվել Ստամբուլ: Այժմ Թուրք և իսլամ ստեղ-ծագործությունների թանգարանում է, ուր ցուցադրված է 715 գույքահամարի տակ (նախկինում՝ 6 էվգաֆա, 58 գույքահամար): Նրա չափերն են 2,75×5,90 ս: Երրորդ հենքը և միջնաթևերը գույզ ունեն, փղոսկրաշագանակագույն բրդաթելերից են: Յուրաքանչյուր խավահանգուցաշարից հետո երկու միջ-նաթևեր են անցկացված, Մեկ ուս-ում կան 34 հորիզոնական և 32 ուղղա-հայաց (ընդամենը 1088) գեորդեղյան գորգահանգույցներ: Խավը կոշտ քրդից է, սեղմ նանգուցավորված, դեպի ձախ թևքված ու կարճ: Օգտագործված է կարմիր, վարդագույն, կապույտ, դեղին, շագանակագույն և փղոսկրագույն երփներանգ բրդաթել: Երրորդ լավ է պահպանված, թեև եզրագոտուց մի փոքր պակասում է, իսկ կենտրոնական դաշտում՝ մանր անցքեր կան:

Կենտրոնական դաշտն ունի 2 ս լայնություն և կարմիր ֆոն: Այս գորգը առավելապես ծաղկայինից դեպի մեղալիոն ձգտող փոխանցում է, փոքր վարդյակների համադրումով՝ մեծ ծաղկամեղալիոնի նախաքայլը: Վարդյակ-ները, թեև համախմբվում են, բայց տակավին կենտրոնական որոշակի ա-սանցքի շուրջ չեն միավորված և միասնական ամբողջություն չեն կազմում: Գորգի նորինվածքը վարդյակների փնջավորման երեք խմբավորումներից է կազմված, որոնք իրարից բաժանված են նմանաոճ երեք տարբեր հորիզո-նական ծաղկաշարաններով: Վարդյակների համախմբման յուրաքանչյուր կենտրոնացումը կատարված է խաչանիշի սխեմայով: Վերից վար ամբողջ վարդյակները դասավորված են երեք ուղղահայաց առանցքի շուրջ: Յուրա-քանչյուր խմբավորման կենտրոնի վարդյակը ևս իր հիմքով խաչանիշ է՝ կո-դային հավելյալ թևերով: Հետևաբար, այն վերածվում է ութանկյան և ար-տաքենայեն գարդարված է կովկասյան կոռագարդերով, որոնք ծաղկային ձևավորման են ենթարկված: Գորդն ունի նաև իրար մեջ ներփակված ութ-

41 Վերոհիշյալ գորգերի նկարները տե՛ս Ե. Ետկինի հրատարակած երկնաորայնում: Կո-տորական գրված թվերի համարիչը ցույց է տալիս «էվգաֆա», իսկ հայտարարը՝ ներկայիս Թուրք և իսլամ ստեղծագործությունների թանգարանի գույքահամարները:

42 Şerare Yetkin, Early Caucasian carpets in Turkey, v. I, pl. 85.

անկյուն կորիզ: Նրա վերևում ու ներքևում ոճավորված, նմանաձև ծաղկային զարդամոտիվներ կան, որոնք իրարից տարբերվում են գունային համակարգով: Իսկ երկու կողքերին առավել երկրաչափական ոճավորման ենթարկված նմանատիպ վարդյակներ են: Չորս անկյունների վարդյակները թե՛ արտաքին ձևավորմամբ և թե՛ գունային դասակարգումով համանման են: Վարդյակի կենտրոնում ութանկյունն է՝ նմանօրինակ կորիզով, իսկ չորս կողմերից շուշանաճ տերևներ են բարձրանում, որոնց միասնությունը արտաքինապես յուրօրինակ կեռիսաչ է ձևացնում: Շուշանատերևների միջև խաչակնետրոն ութանկյունն է տեղադրված, իսկ շուշանատերևներից համաչափորեն բարձրանում է մի այլ ծաղկեփունջ: Վարդյակների յուրաքանչյուր խմբավորման արանքում, որպես անջատող միջնորմ, հորիզոնական դիրքով դասավորված է նմանաճ այլ վարդյակների շարասյուն:

Լայն գորգագոտին զարդարված է մեջրեղմեջ, հակազիր դասավորված, բաց ու մուգ կեռանտատերևների հաջորդական շղթայով, որոնց զխիկներին փոքրիկ խաչեր են դրոշմված: Այս գորգագոտին ներսից ու դրսից շրջափակված է նեղ եզրագոտիներով, որոնց վրա ևս շեղադիր, հավասարաթև խաչեր են դրոշմված: Ելքերում բաց մնացած տարածությունը ներկայացնում է վերից վար նմանաճ վարդյակների կանոնավոր շարան, որը հատվում է դորգագոտիով:

Էրզրումի այս գորգը ևս ունի իր տարբերակները: Դրանք են՝ էրզրումի Քեռսե էօմեր գրադարանից 1915 թ. բերված 41/3078 գույքահամարի գորգը, Թոխատի Ալի փաշա մզկիթից բերված 880/1—721 գույքահամարի, նաև նույն մզկիթից 1936 թ. բերված 941/694 գույքահամարի գորգերը և այլն: Վերոհիշյալ բոլոր հնամաշ գորգերն էլ պատկանում են XVIII—XVIII դդ.:

Այսպիսով, ոչ միայն պատմաաշխարհագրական տվյալներով, այլև գորգերի ընդհանուր հորինվածքով, զարդաձևերով ու գունային համակարգով էրզրումի (Կարինի) վերոհիշյալ գորգերը սերտ կապ ունեն Արցախ-ղարաբաղյան, Վանի, Բիթլիսի, Սվազի, Թոխատի, Ամասիայի, Դիվրիկի և այլ երբեմնի հայաշատ կենտրոնների նմանաճ գորգերի հետ: Վիշապագորգերի մասին խոսելիս, գորգարվեստի մասնագետ Մ. Ֆ. Սարրեն (1928 թ.) գրել է. «Տեսնում եմ, որ այս գորգերը գործված են քրիստոնյաների կողմից, որովհետև բնութենում, թե այլուր պահպանվող գորգերի մեջ շատերը խաչերով են և այդ շրջանների (Կարինի և Վանի—Հ. Գ.) քրիստոնյաները լինելու էին հայերը»⁴³: Նշված ընդհանրությունը չի նկատվում պարսկական, ադրբեջանական և թուրքական գորգերի միջև: Նման ընդհանրության և ոճական միասնության իսկական պատճառը հայ ժողովրդի ստեղծագործական ավանդույթն է: Դրանք, իսկապես, հայկական գորգեր են, որոնք միջազգային մասնագիտական գրականության մեջ «կոմկոսյան» և «անատոլիական-թուրքական» ընդհանուր անունների տակ դրվելով, կորցնում են իրենց հայկականությունը: Հայատառ «Գոհար» գորգի առկայությունը մեծապես նպաստում է այդ տիպի գորգերի հայկական ծագման բացահայտմանը:

⁴³ A. Sakisian. Les tapis a dragons et leur origine arménienne, extrait de la Revue Syria, 1928, Paris, p. 254, note 2.

САМОБЫТНЫЕ ОБРАЗЦЫ КОВРОДЕЛИЯ КАРИНСКОЙ ОБЛАСТИ

ԱՐՄԵՆԻԱ

Резюме

Исторические источники свидетельствуют о том, что ковроделие было развито в армянской провинции Карин (Эрзрум) еще в раннем средневековье. В результате геноцида армян в Турции в 1915 г. в числе многих материальных и культурных ценностей у армянского населения были захвачены также ковры. Долгое время о них ничего не сообщалось. Но в последние годы об этих коврах стали писать как о произведениях турецкого искусства. К числу таких ковров, датируемых XVIII в., относятся два ковра из Карина, которые демонстрируются в Стамбульском музее произведений турецкого и исламского искусства. Их сопоставление с армянским ковром «Гоар» и с традициями армянского орнаментального искусства явствует, что рассматриваемые ковры также являются армянскими.